


«Կենգուրու 2020» առցանց մրցույթի
պաշտոնական գործընկերը Uteach հարթակն է:

Uteach

Հարթակի ստեղծման գործում մեր պաշտոնական գործընկերն է Uteach հարթակը (<https://uteach.io/hy>), որի օգնությամբ յուրաքանչյուրը կարող է թույլտվություն ստեղծել առցանց ուսուցման արհեստավարժ կայք, ընտրել ձևավորում, դոմեն, վերբեռնել տեսադասեր և վաճառել դրանք:





ԿԵՆԳՈՒՐՈՒ 2020

ԱՌՑԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեր շահ տիրելի մասնակիցներ,

Ուրախ ենք տեղեկացնելու, որ «Այբ» կրթական հիմնադրամի և «Ախստ Գլոբալ» ՍՊԸ-ի համագործակցության շնորհիվ Uteach հարթակով վերջապես կկայանա «Կենգուրու 2020»-ը: Այս տարի առաջին անգամ մրցույթն անցկացվելու է առցանց, և մրցույթին արդեն գրանցված մասնակիցները պարզապես պետք է կատարեն ևս մի քանի քայլ և գրանցվեն համապատասխան համակարգում: Անհրաժեշտ է միայն երեք բան՝ **ցանկություն, հասանելիություն համացանցին և գործող էլ. հասցե:**


Համակարգը գործում է ցանկացած սարքում, որն ունի հասանելիություն համացանցին: Ստորև՝ գրանցման քայլերը:



Անցնում եք հետևյալ հղումով՝ kangaroo2020.contests.am:



Սեղմում եք Էկրանի վերևի աջ անկյունում գտնվող «Գրանցվել» կոճակը, ինչից հետո կբացվի այս պատուհանը.



Քայլ 3

Ընտրում եք մարզը, համայնքը, դպրոցը, գտնում ձեզ աշակերտների ցանկում, մուտքագրում գործող Էլ. հասցե և գրում գաղտնաբառ (գաղտնաբառը ոչ մի դեպքում չեք մոռանում. գրանցեք այն ձեզ մոտ որևէ ապահով տեղ և պահպանեք հետագայում մրցույթին միանալու համար): Սեղմում եք **«Գրանցվել»**:

Դուք արդեն մրցույթի առցանց համակարգի անդամ եք:

Քայլ 4


Բացված էջի վերևի աջ անկյունում կտեսնեք **«Թեստեր»** բաժինը: Մրցույթին մասնակցելու համար պետք է անցնեք այդ բաժին:

Քայլ 5


Այդտեղ կլինի ձեր դասարանին համապատասխան թեստը: Սեղմում եք **«Անցնել թեստը»** կոճակն ու սկսում լրացնել թեստը: Բոլոր հարցերի համար կտեսնեք հայերեն և ռուսերեն (ռուսալեզու աշակերտների համար) տարբերակներ:

Քայլ 6

Կարդում եք խնդիրը, լուծում, ստուգում որ տարբերակին է համապատասխանում ստացված պատասխանը, և **«Տարբերակներ»** տողից ընտրում համապատասխան տարբերակը.





Վերևի աջ անկյունում միշտ կերևա ժամանակը, ամեն խնդրի վերևամասում խնդրին տրվող միավորը:





Ավարտելուց հետո սեղմում եք «**Հաստատել**» կոճակը.



Վերջ, շնորհավորում ենք:

Ուրախ նորություն

Լրացուցիչ գրանցումներն արդեն սկսվել են և շարունակվելու են մինչև սեպտեմբերի 10-ը: Վճարման վերջնաժամկետը **սեպտեմբերի 10-ի ժամը 12:00-ն է (կեսօր), իսկ գրանցմանը՝ ժամը 13:00-ը: Վճարումն անելուց հետո անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝ <https://rb.gy/zqx69d>, և գրանցվել՝ ցանկերում ներառվելու համար: Կտրոնը դպրոց փոխանցել պետք չէ: Այն պարզապես պետք է կցել գրանցվելիս:**

Ուշադրություն: Լրացուցիչ գրանցման ժամկետի ավարտից հետո ավելացումներ անել այլևս հնարավոր չի լինի: Այս անգամ մրցույթի նախորդ օրը և մրցույթի օրը գրանցում չի լինելու:



Կարևոր

Հարթակում կարող եք գրանցվել սեպտեմբերի 11-ից, սակայն գրանցվելուց և մուտք գործելուց հետո թեստը դեռ տեսանելի չի լինի: Մինչ այդ արված բոլոր գրանցումները կկորչեն, քանի որ մասնակիցների վերջնական ցանկերը բեռնվելու են սեպտեմբերի 11-ին: Թեստը տեսանելի կլինի միայն սեպտեմբերի 12-ին՝ ժամը 13:00-14:15: Խնդրում ենք չուշանալ:

Ժամանակի ավարտից անմիջապես հետո թեստը կփակվի: Նորից մուտք գործելու հնարավորություն այլևս չեք ունենա:

Հաջողություն ենք մաղթում բոլորին և սպասում արդար ու բարձր արդյունքների: